

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Սեպուհ Լազ-Մինասեան (1825-1887)

Տաղանդաւոր թատերագիր մըն է, որ տարաբախտօրէն մնացած է մթութեան մէջ: Ծնած է Պոլիս եւ աշակերտած է Մուրատ-Ռափայէլեան վարժարանին (1838–1841): Մկրտիչ Պէշիկթաշլեանի եւ Սրապիոն Հեքիմեանի թատերական եռուն գործունէութեան տարիներուն գրած է **Արշակ Բ** ողբերգութիւնը 1857-ին, նախ քան համանուն գործերը այդ երկու մեծերուն: Հեղինակին նախասիրած գործը, սակայն, եղաւ **Հելէնէ**, պատմական ողբերգութիւնը հինգ արարով, զոր գրի առած է տասնհինգ օրուան մէջ 1862-ին: Այս երկու ողբերգութիւնները հրատարակուած են. մնացեալ գործերը անտիպ կը մնան. **Զապէլ** (1858), **Արա գեղեցիկ** (1861), հայոց պատմութենէն առնուած. **Մարի եւ Խոսրով** (1870), **Արման Մարի** (1869) Պոլսոյ կեանքէն, **Տոննա Լէոնորա** (1872) սպանիական կեանքէ, **Սելիմ Գ** (1866), եւ **Առտիլ Ազիզ** (1876) թուրք պետական կեանքէ առնուած, **Յեփթայէի աղջիկը** (1873): Ունի կատակերգութիւններ եւ, որոնցմէ կը յիշուին **Սուտ Փիլիսոփայք** (1862), **Ամբակում** (1866), **Տիկինն Սօֆրոնիա** (1867), **Փարթամ ամիրայ** (1873):

Դատելով իր **Արշակ Բ** եւ **Հելէնէ** ողբերգութիւններէն, Մինասեան անժխտելիօրէն տաղանդաւոր թատերագրի էական յատկութիւններով օժտուած է: Գիտէ բեմադրել նիւթը՝ ընդլայնելով զայն, կը պատրաստէ գործողութիւնը եւ կը ստեղծէ կնճիռ ու տագնապ, լի կեանքով եւ շարժումով: Այս արդիւնք է հզօր երեակայութեան. գուցէ կը պակսի բանաստեղծական թռիչքը, աւելի գունազեղ դարձնելու համար արտայայտութեան եղանակը: Միտք, արտայայտութեան ոյժ, խօսակցութիւններուն կարգն ու կորովը արժէք կու տան իր ողբերգութիւններուն, բայց բանաստեղծական երանգ ու խանդ չեն տաքցներ զանոնք:

Հելէնէ հեղինակին նախասիրած գործն է, որ գետեղուած է մակեդոնական գերիշխանութեան շրջանին մէջ: Նիւթը միայն մէկ քանի անուններ առած է պատմական այդ շրջանէն, ինչպէս Արտաւազդ, Արդուարդ, Նէոպտողոմէոս. մնացածը հեղինակին հզօր երեակայութեան արդիւնք է: Մեծն Աղեքսանդրի մահէն յետոյ, հայերը կ'ապստամբին մակեդոնեան իշխանութեան դէմ: Արդուարդ, հայ իշխանապետը, գլուխն է ապստամբութեան, իսկ Նէոպտողոմէոս մակեդոնեան կուսակալն է Հայաստանի. իր դուստրը՝ Հելէնէ՝ բուն սիրով կապուած է Արդուարդի որդիին՝ Արտաւազդի: Հելէնէ կ'ատէ Արդուարդ, իր մօրը դահիճը, բայց կը սիրէ որդին՝ Արտաւազդ: Այս սիրոյ պայքարն է որ կը դարձնէ խաղը զգացական եւ ողբերգական:

Արտաւազդ, հայ եւ մակեդոնական զօրքերուն ընդհարումին մէջ, գաղտնի կերպով կ'ազատէ Նէոպտողոմէոսն ու Հելէնէն. արարք, որուն դէմ կը զայրանայ հայրը եւ կը հռչակէ որդին՝ մատնիչ ու դաւաճան հայրենիքին: Ծերակոյտին հրամանով Արտաւազդ կը բանտարկուի պատերազմի ընթացքին, յետոյ մահուան դատապարտուելու համար: Ողբերգութեան կնճիռը կը կայանայ սիրոյ պայքարին մէջ, որ կայ ընդ մէջ Արտաւազդի եւ Հելէնէի. սա կը նուիրէ ինքզինք մահուան՝ ազատելու համար սիրականը, ու նա փոխադարձ յանձն կ'առնէ զոհուիլ, որպէսզի իր սիրուիին եւ անոր հայրը փրկուին գլխատումէ: Սէր, անձնուիրութիւն, հայրական ու որդիական զգացումները ողբերգականօրէն զուգուած իրարու, յուզումնալից ու կենսալից կը դարձնեն այս գործը:

(Քաղուած Հ. Մետրոպ Վրդ. Ծանաշեանի “Հայ Գրականութեան Նոր Շրջանի Համառօտ Պատմութիւն” հատորէն)

